ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԻՄԱԽՈՍԻ

Վարսենիկ Կարենի Սարգսյանի «Սնանկության կառավարման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (ոչ ֆինանսական հատվածի առևտրային կազմակերպությունների օրինակով)» թեմայով, ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

1. Ատենախոսության թեմայի արդիականությունը

Տնտեսավարող սուբյեկտների արդյունավետ գործունեությունը ամուր հիմքեր է ստեղծում երկրի սոցիալ-տնտեսական կայուն զարգացման համար: Առևտրային կազմակերպությունների կողմից ստանձնած պարտավորությունների ժամանակին և ամբողջ ծավալով չկատարելու արդյունքում առաջացող սնանկության գործընթացները տնտեսությունում հանգեցնում են շղթայական երևույթների, որոնք իրենց հերթին կազմալուծում են ոչ միայն այդ շղթայում ընդգրկված առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեությունը, այլև ողջ տնտեսությունը կամ դրա առանձին ոլորտները: Հատկանշական է, որ, օրինակ, պետական և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների մասնավորեցման ժամանակ այդ ընկերությունների կողմից պարտավորությունների չկատարման փաստն ու սնանկության (կամ բռնագանձման) գործերի առկայությունը ամենամեծ խնդիրներից էին(են), որոնց լուծման համար պահանջվում են զգալի ջանքեր և կազմակերպական միջոցառումների իրականացում: Ընդ որում, միշտ չէ որ այդ միջոցառումներն իրականացվում են բավարար արդյունավետությամբ՝ հիմնականում պետական կառավարման մարմինների ու տնտեսավարող սուբյեկտների շահերի բախման պատճառով:

Առևտրային կազմակերպությունների (տնտեսության ոչ ֆինանսական հատվածի, այսուհետ՝ առևտրային կազմակերպությունների, եթե այլ բան չի նշված տվյալ համատեքստում) ֆինանսական կարգապահությունը շուկայական տնտեսության կայունությունն ապահովող հիմնասյուներից է, որի առաջնային նպատակներից է թույլ չտալ առևտրային կազմակերպությունների անվճարունակության առաջացումը և սնանկության գործընթացների նախաձեռնումը: Այդ գործընթացների իրավական կարգավորումն իրականացվում է օրենքների, այլ

իրավական ակտերի և սնանկության գործընթացը սպասարկող ենթակառուցվածքների (ներառյալ սնանկության գործերով դատարանների և ֆինանսական առողջացման ծրագրերի իրականացման համար պատասխանատուների, կառավարիչների) միջոցով: Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս փաստել այն մասին, որ նշված ենթակառուցվածքների ինչպես կազմը, այնպես էլ գործունեության արդյունքները չեն բավարարում ներկայիս պահանջներին, չեն համապատասխանում միջազգային լավագույն փորձին և ունեն ցածր արդյունավետություն: Նկատի ունենք նաև առևտրային կազմակերպությունների անվճարունակության ոլորտում իրականացվող ուսումնասիրությունների արդյունքները (որոնցից վերջինը տեղ է գտել Doing business 2020-ում և ներառում է 178 երկրների տվյալները), որոնք վկայում են Հայաստանի անբավարար ցուցանիշների մասին (ըստ «Անվճարունակության հիմնախնդրի լուծում» ամփոփ ցուցիչի ՀՀ-ն զբաղեցնում է 95-րդ տեղը, Վրաստանը՝ 64-րդ տեղը, Ադրբեջանը՝ 47-րդը): Ընդհանուր առմամբ, եթե անվճարունակության գործընթացի կարգավորման լավագույն ցուցանիշներ ունեցող երկրներում առևտրային կազմակերպությունների անվճարունակության գործընթացը ծառայում է ինչպես այդ կազմակերպությունների, այնպես էլ ամբողջ տնտեսության առողջացմանը, ապա ՀՀ-ում անվճարունակության գործընթացի արդյունքում փոշիանում են առևտրային կազմակերպությունների ակտիվները, ավելանում է գործազուրկների թվաքանակը, գրեթե չեն իրականացվում ֆինանսական առողջացման ծրագրեր, որի հետևանքով տնտեսությունը կրում է զգալի սոցիալ-տնտեսական վնասներ:

Վերը նշված հիմնահարցերի ուսումնասիրությանն է նվիրված քննարկվող ատենախոսությունը, և ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է ՀՀ ոչ ֆինանսական հատվածի առևտրային կազմակերպությունների սնանկության գործընթացի կառավարման կարևորությամբ, ոլորտում արդյունավետ ինստիտուտների ձևավորման և կայացման անհրաժեշտությամբ, ինչպես նաև գործող համակարգերի բարելավման հրամայականով:

2. Հետազոտության նպատակը և խնդիրները

Ատենախոսության նպատակն է՝ ուսումնասիրելով առևտրային կազմակերպությունների ֆինանսական կայունության ապահովման կազմակերպա-

տնտեսական կառուցակարգերը, մեթոդներն ու սնանկության կանխարգելման հիմնական եղանակները, մշակել սնանկության ընթացակարգերի արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ և միջոցառումներ: Այդ նպատակին հասնելու համար հեղինակի կողմից առանձնացվել և քննարկվել են հետևյալ խնդիրները՝

- քննության առնել առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական իրավիճակի քանակական բնութագրերը՝ ելնելով սնանկացման տնտեսաիրավական կարգավորումների ու հակաճգնաժամային կառավարման արդյունքներից,
- վերհանել առևտրային կազմակերպությունների անվճարունակության և սնանկության տնտեսաիրավական կարգավորման հիմնահարցերը,
- հիմնավորել առևտրային կազմակերպությունների սնանկության կանխարգելման ու կառավարման կատարելագործման հիմնական ուղիները՝ կազմակերպությունների ֆինանսական կայունության վրա ազդող գործոնների գնահատմամբ,
- ՀՀ-ում գործող առևտրային կազմակերպությունների որոշակի ընտրանքի համար իրականացնել սնանկության առաջացման քանակական գնահատումներ, մասնավորապես՝ ըստ սնանկության հավանականության բացահայտման չափանիշի:

3. Հետազոտությունում ստացված արդյունքները և ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության հիմնական գիտական նորույթը կայանում է հետևյալում.

- բացահայտվել են փոքր և բաց տնտեսություններում համաշխարհայնացման և ինտեգրման պայմաններում համընդհանուր ճգնաժամերի (այդ թվում՝ COVID-19-ի) արդյունքում առաջացող առևտրային կազմակերպությունների սնանկության հիմնահարցերը,
- հայրենական և միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա բացահայտվել է առևտրային կազմակերպությունների սնանկության երևույթի ծագումնաբանությունը, ներկայացվել են դրա դրսևորման առանձնահատկությունները և սնանկության կանխարգելման հիմնական մոտեցումները,
- համակարգված ներկայացվել են առևտրային կազմակերպությունների սնանկության պատճառները, դրսևորման ձևերն ու կանխարգելմանն ուղղված

տնտեսա-իրավական կարգավորումների հիմնական ուղղությունները, միջոցառումներն ու առողջացման ծրագրերը,

- մշակվել են առևտրային կազմակերպությունների սնանկության ախտորոշման չափանիշներ ու սնանկության կանխարգելման օրենսդրական միջոցառումներ, որոնք կնպաստեն անվճարունակության իմունիտետի բարձրացմանն ու սնանկության կառավարման բարելավմանը,
- ըստ սնանկության հավանականության չափանիշի վարկանշման մեթոդական մոտեցումների՝ ՀՀ առևտրային կազմակերպությունների ընտրանքի համար առաջարկվել է սնանկության կանխարգելման մեթոդական մոտեցումների էկոնոմետրիկ մոդելներին զուգահեռ ընդգրկել սնանկության հայտանիշների կարևորության գնահատման ու վարկանիշավորման թեստային (տեղեկատվական կշիռների) և փորձագիտական մեթոդներ և մոդելներ:

4. Ատենախոսության արդյունքների գործնական և գիտական նշանակությունը: Ատենախոսության հիմնադրույթները և ստացված արդյունքները, ինչպես նաև առևտրային կազմակերպությունների սնանկության կառավարման բարելավման հիմնախնդիրների լուծման համար առաջարկված միջոցառումները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր, գործադիր և սնանկության գործերով դատական մարմինների կողմից՝ ոչ ֆինանսական հատվածի առևտրային կազմակերպությունների սնանկության ախտորոշման մեթոդաբանության մշակման, ինչպես նաև սնանկության գործընթացի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման աշխատանքներում: Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտակար լինել առևտրային կազմակերպությունների, սնանկության գործերը քննող դատարանների, կառավարիչների, անվճարունակության հիմնախնդիրներով հետաքրքրվող տնտեսագետների ու այլ հետազոտողների համար:

5. Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստը շարադրված է 126 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը (առանց հավելվածների):

Ներածությունում կարևորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, ձևակերպվել են

հետազոտության նպատակն ու խնդիրները, ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, նշվել են հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը:

Ատենախոսության առաջին՝ «Կազմակերպությունների սնանկության բացահայտման և կառավարման տեսամեթոդական հիմքերը» գլխում քննարկվում են սնանկության տեսակները, ֆունկցիոնալ դերը շուկայական համակարգում, սնանկության կարգավորման միջազգային փորձը և կանխարգելմանն ուղղված մեթոդները: Առանձնակի ուշադրություն է դարձվում «անվճարունակություն» և «սնանկություն» տերմիններին:

Ատենախոսության երկրորդ՝ «Կազմակերպությունների սնանկության տնտեսահիրավական կարգավորումների ու գնահատման մեթոդաբանական հիմքերը ՀՀ-ում» գլխում հեղինակը ներկայացվնում է ոչ ֆինանսական հատվածի առևտրային կազմակերպությունների սնանկացման տնտեսահիրավական կարգավորման հիմնախնդիրները և ՀՀ-ում սնանկության ինստիտուտի կատարելագործման հիմնական ուղիները:

Ատենախոսության երրորդ՝ «Կազմակերպությունների սնանկության կառավարման կատարելագործման և գործոնների բացահայտման հիմնուղիները Հայաստանի Հանրապետությունում» գլխում իրականացվել է կազմակերպությունների ֆինանսական կայունության ինտեգրալային գնահատում սնանկության ռիսկի կառավարման համատեքստում: Տնտեսվարող սուբյեկտների գործունեության հիմնական բնութագրիչները՝ ֆինանսատնտեսական ցուցանիշները, ձևավորում են մի համակարգ, որտեղ կարևոր տեղ ունեն ֆինանսական կայունության գործակիցները:

«Եզրակացություններ» բաժնում ներկայացվել են ատենախոսության հիմնական արդյունքները, եզրահանգումներն ու դրանցից բխող ատենախոսի առաջարկությունները:

6. Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ներկայացված ատենախոսությունը զերծ չէ թերություններից, որոնցից կցանկանայի նշել հետևյալները՝

1. Ատենախոսության երկրորդ գլխում (ենթագլուխներ 2.2-ում՝ ՀՀ առևտրային կազմակերպությունների սնանկացման տնտեսահիրավական կարգավորման հիմնախնդիրները և 2.3-ում՝ ՀՀ սնանկության ինստիտուտի կատարելագործման

հիմնական ուղիները) հեղինակը բազմակողմանիորեն ուսումնասիրել է այն ինստիտուտների գործունեությունը, որոնք զբաղվում են առևտրային կազմակերպությունների սնանկության հիմնախնդիրների լուծմամբ՝ դրանք առաջանալուց հետո և անվճարունակության գործընթացի տնտեսա-իրավական կարգավորմամբ: Այլ կերպ ասած, ուսումնասիրվել է առևտրային կազմակերպությունների համար արտաքին միջավայր համարվող և այն ձևավորող կառույցների գործունեությունը: Սակայն աշխատության հեղինակը հետազոտության առարկա չի դարձրել առևտրային կազմակերպությունների գործունեության ներքին կանոնների համալիրը (ընկերության ղեկավարության, խորհրդի, բաժնետերերի, աշխատակիցների և այլ շահառուների միջև առկա հարաբերությունները), որն էլ կազմում է կորպորատիվ կառավարման էությունը: Իսկ կորպորատիվ կառավարման հիմնարար արժեքներից մեկն այն է, որ այդ համակարգը պետք է ճանաչի շահառու անձանց՝ օրենքով սահմանված իրավունքները և խրախուսի ընկերությունների և շահառուների ակտիվ համագործակցությունը՝ ուղղված հասարակության բարեկեցության աճին, աշխատատեղերի ստեղծմանը և ֆինանսապես առողջ ընկերությունների կայունությանը: Նշված արժեքների պահպանության անհրաժեշտությունը ամրագրված է ՀՀ կառավարության 2010 թ. դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագրքին հավանություն տալու մասին» N 1769-Ա որոշմամբ: Միևնույն ժամանակ նախատեսվում է, որ ՀՀ պետական կառավարման մարմինները պետություն-մասնավոր հատված գործընկերության, պետական աջակցության, ինչպես նաև հարկային կամ մաքսային արտոնությունների տրամադրման ժամանակ պետք է ղեկավարվեն ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքի պահանջները կատարող ընկերություններին նախապատվություն տալու սկզբունքով: Այսինքն, պետության կողմից աջակցություն ստանալու համար կարևորվում է առևտրային կազմակերպությունների (բաժնետիրական ընկերությունների) կողմից ներքին գործառութային և ֆինանսական կարգապահությունը: Նշված պայմանների հաշվառումը և ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության անկյունաքար դարձնելը ապահովում են ընկերության կորպորատիվ կառավարման մասնակիցների (սեփականատերեր, կառավարիչներ և վարձու աշխատողներ) շահերի ներդաշնակություն, կորպորատիվ կառավարման սկզբունքների առաջնայնության ապահովում, որն է ապահովում է

ընկերության ֆինանսական կայունությունը և դրանով իսկ սնանկության կարխարգելումը ընկերության «ներսից»:

2. Հայաստանի Հանրապետությունում սնանկության գործընթացի ամենախոցելի կողմերից մեկը սնանկ ճանաչված առևտրային կազմակերպությունների գույքի աճուրդներն են: Թեև հեղինակն իր ուշադրության կենտրոնում է պահել այս կարևոր հիմնախնդիրը, մասնավորապես, աշխատության եզրակացությունների մասում (4-րդ եզրակացության վերջնամասում) նշվում է, որ. «Նշվածը հետևանք է սնանկության գործընթացի կազմակերպման ոչ թափանցիկ, ոչ հրապարակային գործողությունների, ինչպես նաև սնանկության գործընթացում գտնվող կազմակերպությունների գույքի ընդհանուր վաճառքների կազմում էլեկտրոնային աճուրդների ցածր տեսակարար կշռի:», սակայն, միևնույն ժամանակ, այս երևույթի թերությունների արմատական բացահայտման ու լուծման ուղիների մատնանշումը կարիք ունի լրացումների և հիմնավորումների: Բանն այն է, որ սնանկության գործընթացում գտնվող առևտրային կազմակերպությունների գույքի աճուրդների կազմակերպումը առերևույթ «հրապարակային և թափանցիկ» է, մինչդեռ նույնիսկ էլեկտրոնային աճուրդները, որպես հրապարակային սակարկությունների ամենաարդյունավետ ձև, մեզանում իրականություն դարձան բավականին ուշ, երբ սնանկության «առաջին ալիքի» ամենախոշոր զանգվածը պարզապես սնանկացվեց՝ պատճառելով հսկայական վնասներ ինչպես ընկերություններին, այնպես էլ պետության շահերին: Այդ երևույթը շարունակվում է նաև ներկայումս: Այսպես, Doing Business 2020-ում Անվճարունակության լուծման (Resolving insolvency) ցուցիչի հաշվարկման ժամանակ դիտարկվող անվճարունակության գործընթացում ընդգրկված գույքի հետ վերադարձման ցուցանիշը մեկ դոլարի հաշվով կազմել է Ճապոնիայում՝ 92.1 ցենտ (որն ամենաբարձր ցուցանիշն է բոլոր երկրների շարքում), Վրաստանում՝ 40.5 ցենտ, Ադրբեջանում՝ 39.7 ցենտ, Հայաստանում՝ 39.2 ցենտ, Իրանի Իսլամական Հանրապետությունում՝ 36.1 ցենտ և Թուրքիայում՝ 10.5 ցենտ[1]: Բերված ցուցանիշը Հայաստանի համար վկայում է, որ սնանկացման գործընթացը ոչ միայն ծախսատար է, այլև խիստ անարդյունավետ: Այս հանգամանքը պայմանավորված է հիմնականում սնանկացված առևտրային կազմակերպությունների գույքի աճուրդների կազմակերպման գործում տեղ գտած բացթողումներով և սխալներով: Վերջիններս իրենց հերթին պայմանավորված են գույքի հրապարակային սակարկության՝ աճուրդի

[1] Տես՝ https://www.doingbusiness.org/en/data/exploretopics/resolving-insolvency էլեկտրոնային հարթակում տեղադրված տեղեկատվական շարքերը:

ինչպես օրենսդրական, այնպես էլ կազմակերպական բնույթի բացթողումներով, որոնց մատնանշումը պետք է տեղ գտներ հեղինակի կողմից սնանկության ընթացակարգի հիմնախնդիրների լուծման վերաբերյալ առաջարկությունների մեջ:

Նկատենք նաև, որ 2020 թվականին տնտեսագիտության գծով նոբելյան մրցանակակիրներ են ճանաչվել ԱՄՆ-ի պրոֆեսորներ Պոլ Միլգրոմը (Paul R.Milgrom) և Ռոբերտ Ուիլսոնը (Robert B.Wilson) «Աճուրդների տեսության կատարելագործումը և աճուրդների նոր ձևաչափերի հայտնաբերումը» ("Improvements to auction theory and inventions of new auction formats") աշխատության համար[2]: Այդ ուսումնասիրության հետ ծանոթությունը բերում է այն եզրահանգման, որ ՀՀ-ում կիրառվող աճուրդների վերաբերյալ օրենսդրությունը գտնվում է սաղմնային վիճակում, քանի որ այն զուրկ է ճկունությունից, գործընթացի կազմակերպումը իրականացվում է կարծրատիպերով, և որոնց պատճառով մեծ է այդ ոլորտում ստվերային գործարքների տեսակարար կշիռը, ինչն էլ նվազագույնի է հասցնում աճուրդների արդյունավետության աստիճանը:

Այս ամենը, հուսով ենք, կդառնա հեղինակի ուշադրության առարկա՝ իր առաջիկա ուսումնասիրություններում:

3. Խոսելով սնանկության գործընթացում գտնվող ակտիվների կառավարման ցածր արդյունավետության մասին, թեև հեղինակը կարևորել է այդ գործում լուծարային կառավարիչների դերը, այդուհանդերձ, կարծում ենք հեղինակի կողմից կատարված առաջարկությունները չունեն բավարար տնտեսական հիմնավորվածություն: Այսպես «Սնանկության մասին» ՀՀ օրենքի (ՀՀ ԱԺ կողմից 2006 թ. դեկտեմբերի 25-ին ընդունված) հոդված 30-ի (Կառավարչի վարձատրությունը) 2-րդ մասով սահմանված է. «2. Եթե սույն օրենքով նախատեսված դեպքերում կառավարչի վարձատրության այլ չափ նախատեսված չէ, ապա կառավարչի վարձատրությունը սահմանվում է դատական ակտով՝ պարտատերերի պահանջների բավարարման չափի հետևյալ տոկոսադրույքներով՝

1) մինչև 25 միլիոն դրամ՝ 10 տոկոս.

2) 25-50 միլիոն դրամ՝ 2 500 000 դրամին գումարած 25 միլիոն դրամը գերազանցող գումարի 8 տոկոսը.

3) 50-100 միլիոն դրամ՝ 4 500 000 դրամին գումարած 50 միլիոն դրամը գերազանցող գումարի 3 տոկոսը.

[2] Աղբյուրը՝ https://www.nobelprize.org/prizes/economic-sciences/2020/summary/ էլեկտրոնային ռեսուրս:

4) 100-500 միլիոն դրամ՝ 6 000 000 դրամին գումարած 100 միլիոն դրամը գերազանցող գումարի 2 տոկոսը.

5) 500 միլիոն դրամից ավելին՝ 14 000 000 դրամին գումարած 500 միլիոն դրամը գերազանցող գումարի 1 տոկոսը:»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն սնանկության գործով վարույթի տևողությունը (սկսած պարտապանի լուծարման վարույթ սկսելու մասին որոշում կայացնելու պահից մինչև սնանկության գործն ավարտելու մասին վճիռ կայացնելը) մինչև վեց ամիս տևելու դեպքում (չհաշված ֆինանսական առողջացման ծրագրի ժամանակահատվածը) կառավարիչը ստանում է պարգևավճար: Ընդ որում, պարգևավճարի չափը սահմանվում է՝

- պարտատերերի պահանջների բավարարման չափի մինչև 50 միլիոն դրամը՝ կառավարչի հաշվարկվող վարձատրության 20 տոկոսի չափով,
- պարտատերերի պահանջների բավարարման չափի 50 միլիոն դրամ և ավելի դեպքում՝ հաշվարկվող վարձատրության 50 տոկոսի չափով:

Թեև, առաջին հայացքից թվում է թե օրենքով ինչպես կառավարչի վարձատրության, այնպես էլ պարգևատրման համար նախատեսված են բավարար մեծության տնտեսական խթանման միջոցներ, սակայն իրականում հազվադեպ են ՀՀ-ում սնանկության այն գործերը, որոնք ավարտվում են վեց ամսում կամ մեկ տարվա ընթացքում: Բանն այն է, որ սնանկության գործերով կառավարիչներին ձեռնտու է այդ գործընթացը ձգձգել տարիներ շարունակ, քանի որ ինչպես աճուրդների կազմակերպումը, այնպես էլ սնանկության գործընթացի ձգձգումը նրանց համար ավելի շահեկան պայմաններ են ստեղծում, քան օրենքով նախատեսված պայմանները:

Կարծում ենք, ատենախոսության հեղինակն այս հանգամանքի վրա պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձներ և մշակեր սնանկության գործերով զբաղվող կառավարիչների գործունեության ստվերայնության նվազեցման ու դրանք օրինական դաշտ բերելու կոնկրետ հանձնարարականներ և առաջարկություններ:

4. Ատենախոսության ենթագլուխ 3.3-ում «Կազմակերպությունների վարկանիշավորումը ֆինանսատնտեսական ցուցանիշների կարևորության աստիճանի գնահատմամբ» ատենախոսության հեղինակը ներկայացնում է կազմակերպությունների ֆինանսական կայունությունը բնութագրող հայտանիշների տեղեկատվական կշիռների ամփոփ նկարագրությունը, որը հիմնված է թվով 32 տարբեր հայտանիշների (գործակիցների) վրա: Կարևորելով հեղինակի կատարած

աշխատանքը, հարկ է նշել, որ. 1) նշված ցուցանիշների համակարգի ընտրությունը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի և 2) նման ձևով բազմաթիվ (ավելի քան 3 տասնյակ) ցուցանիշների օգտագործումը հեղինակի աշխատությունը դարձնում է քիչ պրակտիկ, քանի որ, որպես կանոն, իրական կյանքում այդ քանակությամբ ցուցանիշների հաշվարկումը կապված է զգալի դժվարությունների հետ: Մինչդեռ գործնականում, այն էլ հայրենական առևտրային կազմակերպություններում, ինտեգրալային ցուցանիշի հաշվարկման համար որպես հիմք կարող է ընդունվել կազմակերպության գործունեությունը բնութագրող 3-5 հիմնական ֆինանսատնտեսական ցուցանիշ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները, սակայն, չեն նվազեցնում ատենախոսության արժանիքներն ու ստացված արդյունքները:

Վարսենիկ Կարենի Սարգսյանի «Սնանկության կառավարման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (ոչ ֆինանսական հատվածի առևտրային կազմակերպությունների օրինակով)» հետազոտությունն ինքնուրույն աշխատանք է: Ատենախոսությունում օգտագործված տեսական մոտեցումները և գործնական առաջարկությունները, ինչպես նաև ստացված արդյունքները, գիտականորեն հիմնավորված են և ընդունելի: Ատենախոսությունում ներկայացված առաջարկությունները կիրառելու դեպքում դրանք կարող են ակնհայտ դրական ազդեցություն ունենալ ՀՀ-ում առևտրային կազմակերպությունների անվճարունակության առաջացման ախտորոշման, սնանկության կանխարգելման, այդ գործընթացի կառավարման արդյունավետության համար:

Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր, գործադիր, ինչպես նաև սնանկության գործերը քննող դատական մարմինների աշխատանքներում:

Լինելով ինքնուրույն, ամբողջական և արժեքավոր հետազոտություն, ատենախոսությունը հագեցած է ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն ունեցող նյութերով:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Ատենախոսությունը և սեղմագիրը շարադրված են հստակ և ընկալելի ոճով, դրանց ձևավորումը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրապարակած 7 (յոթ) գիտական աշխատանքում:

Վարսենիկ Կարենի Սարգսյանի «Մնանկության կառավարման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (ոչ ֆինանսական հատվածի առևտրային կազմակերպությունների օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման
ֆակուլտետի «Նորարարության
տնտեսագիտություն» ամբիոնի վարիչ Ա.Խ.ՄԱՐԿՈՍՅԱՆ

Պարոն Ա.Մարկոսյանի ստորագրության
իսկությունը հաստատում եմ.

ԵՊՀ գիտական քարտուղար,
պատմ. գիտ. թեկնածու Լ.Ս.ՀՈՎՍԵՓՅԱՆ

23 նոյեմբերի 2020թ.